ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2021, № 2, 31-43 *Փիլիսոփայություն*
https://doi.org/10.46991/BYSU: E /2021.12.2.031

ՊՈՊՈՒԼԻԶՄԻ ԵՎ ԴԱՎԱԴՐԱՊԱՇՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

ԼԵՎՈՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Պոպուլիզմի և դավադրապաշտական տեսությունների մասին վերջին հարյուրամյակում կան բազմաթիվ հետազոտություններ, որոնք, սակայն, ունեն մեկ ընհանրություն. գրեթե բոլոր հետազոտություններում պոպուլիզմը և դավադրապաշտական տեսությունները դիտարկվում են որպես ժողովրդավարությանը, ողջախոհ և կառուցողական սոցիալ-քաղաքական երկխոսության հաստատմանը սպառնացող երևույթներ: Սակայն մասնագիտական գրականությունում բավարար չափով չեն ուսումնասիրվել պոպուլիզմի և դավադրապաշտական տեսությունների գաղափարական, աշխարհայացքային և բովանդակային ընդհանրությունները: Այս հետազոտությունում, ամբողջացնելով պոպուլիզմի և ԴՏ-ների գաղափարական և աշխարհայացքային ընդհանուր բաղադրիչները, վեր են հանվել որոշ հիմնական բաղադրատարրերը, որոնք բնութագրում են պոպուլիստական ԴՏ-ներին: Այդ բաղադրատարրերն են՝ քաղաքականության մաքիավելիական ըմբռնումը, բարոյական հակադրության հիմքի վրա հասարակության շերտավորումը («բարի ժողովուրդ»-«չար էլիտա»), էլիտաների հրեշացումը, սոցիալ-քաղաքական և սոցիոմշակութային երևույթների առասպելականացումը:

Բանալի բառեր – *«նեղ» գաղափարախոսություն, պոպուլիզմ, դավադրությունների մասին տեսություն, դավադրապաշտական տեսություն, մաքիավելիականություն, գաղափարական բաղադրատարր, հակաէլիտիզմ*

2018 թ. ապրիլյան քաղաքական իրադարձություններից հետո սոցիալական մեդիայում լայն տարածում գտավ «պոպուլիզմ» եզրույթը: Նոր ձևավորված իշխանություններին քաղաքական տարբեր բևեռներից և վերլուծական տարբեր կենտրոններից ավելի ու ավելի հաճախ էին մեղադրում պոպուլիզմի մեջ: Քաղաքական տարբեր շրջանակներ տեղի ունեցած իրադարձությունները պայմանավորում էին նաև «արտաքին» և «ներքին» ուժերի ներգրավվածությամբ, դավադրություններով (հասականալիորեն այդ շրջանակները հաճախ նույնացվում էին «նախկին» իշխանությունների կամ նրանց հովանավորյալների հետ): 2020 թ. արցախյան երկրորդ պատերազմում Հայաստանի կրած պարտությունից հետո գործող իշխանություններին սկսեցին էլ ավելի ինտենսիվորեն մեղադրել տարբեր դավադրությունների մեջ՝ սկսած «պայմանավորված պատերազմում միտումնավոր պարտությունից», ավարտած պատե-

բազմի առանձին դրվագներում դավաճանական գործողություններով և անգործությամբ: Իշխանություններն իրենց հերթին զերծ չէին մնում ընդդիմախոսներին նման «մեղքերի» մեջ մեղադրելուց: «Ներկաները» մեղադրում էին «նախկիններին», «նախկինները»՝ «ներկաներին»:

Քաղաքական «փոխհրաձգությունների» պայմաններում հասկանալիորեն հասարակությունը արդեն տևական ժամանակ է, ինչ գտնվում է սոցիալ-հոգեբանական տեսանկյունից լարված վիճակում: Պատերազմին հաջորդած զանգվածային անզորության, անվստահության և խուճապի մթնոլորտը շարունակում է սնվել պոպուլիստական և դավադրապաշտական տեսություններով (այսուհետ՝ ԴՏ): Ուստի քաղաքական խոսույթում առավել հաճախ կիրառվող այդ հասկացությունները («պոպուլիզմ» և «ԴՏ») հստակեցման, պարզեցման և սահմանման կարիք ունեն: Ի վերջո, մինչև հստակ սահման չգծենք պոպուլիզմի և ոչ պոպուլիզմի, դավադրության մասին տեսության և դավադրապաշտական մտացածին տեսության միջև, չենք կարող տեղի ունեցող սոցիալ-քաղաքական գործընթացներին համարժեք գնահատականներ տալ և համապատասխան դիրքորոշում ընդունել հետագան որոշելու հարցում:

Ինչպե՞ս սահմանել պոպուլիզմը և ԴՏ-ն, ինչո՞ւ են հաճախ պոպուլիստական և դավադրապաշտական պատումները միաձուլված, ի՞նչ աշխարհայացքային և իմաստային ընդհանրություններ կան պոպուլիստական և դավադրապաշտական տեսությունների միջև, արդյո՞ք բոլո՞ր ԴՏ-ներն են պոպուլիստական, և պոպուլիստական բոլոր տեսություններն են կրում ԴՏ-ներ. սրանք հարցեր են, որոնք քաղաքական-փիլիսոփայական հանգամանալից վերլուծության կարիք ունեն: Թեպետ բազմաթիվ տեսաբաններ նշում են պոպուլիզմի և դավադրապաշտական մտածողության միջև կապերը, բայց խնդիրը բավարար չափով ուշադրության չի արժանացել, և, ըստ էության, գործնական հետազոտությունների մեծ կարիք կա[1]: Անշուշտ հասկանալի է, որ մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ համակողմանի պատասխանել բոլոր այս հարցերին, բայց կարելի է ուրվագծել խնդիրների շարքը և նախանշել դրանց լուծման եղանակները հետագա հետազոտությունների համար:

Նախ պետք է նկատել, որ պոպուլիստական և դավադրապաշտական պատումների տարածումը միայն Հայաստանի հասարակությանը բնորոշ երևույթ չէ: Վերջին քսան տարում պոպուլիստական շարժումները և ԴՏ-ները լայն տարածում են գտել նաև ողջ աշխարհում[2]: Հատկանշական է, որ պոպուլիստ առաջնորդները իրենց հրապարակային ելույթներում ավելի ու ավելի հաճախ են օգտագործում ԴՏ-ներ[3]: Ըստ

---

[1] Տե՛ս **Hawkins K.A., Rovira Kaltwasser C.**, The ideational approach to populism, Latin American Research Review, 52(4), 2017, էջ 513-528:

[2] Տե՛ս https://erc.europa.eu/projects-figures/stories/conspiracy-theories-link-populist-movements 30.05.2021

[3] Տե՛ս **Bergmann E.**, Conspiracy & Populism, The Politics of Misinformation, Palgrave Macmillan, 2018, էջ 3-5:

այդմ՝ կարելի է ենթադրել, որ պոպուլիզմի և ԴՏ-ների տարածումը պայմանավորված է ոչ թե քաղաքական կամ ռազմական կոնկրետ իրադարձություններով, այլ գաղափարախոսական և աշխարհայացքային փոխակերպումներով: Եթե պարզենք պոպուլիզմի և ԴՏ-ների աշխարհայացքային և գաղափարախոսական ընդհանրությունները, կարող ենք նաև տալ այն հարցի պատասխանը, թե ինչն է պատճառը, որ ԴՏ-ները և պոպուլիստական գաղափարախոսությունները շատ հաճախ փոխլրացնող երևույթներ են, և, ինչպես ցույց են տալիս վիճակագրական որոշ հետազոտություններ, դավադրապաշտական մտածողության առկայությունը հաճախ ուղիղ համեմատական է պոպուլիստական պատումների նկատմամբ հավատին, այսինքն՝ եթե մարդը հավատում է այս կամ այն ԴՏ-ի իսկությանը, ապա մեծ է հավանականությունը, որ նա կհամաձայնի պոպուլիստական այս կամ այն գաղափարախոսության արժեքաբանության հետ, և՝ հակառակը[4]: Որպեսզի կարողանանք վեր հանել պոպուլիզմի և ԴՏ-ների ընդհանրությունները և համեմատականները, նախ պետք է հասկանանք, թե ինչ ընդհանուր սեռի են պատկանում պոպուլիզմը և ԴՏ-ները: Սկսենք պոպուլիզմի սահմանումից և բնութագրումից:

Ի՞նչ է պոպուլիզմը

Ընդհանրապես «պոպուլիզմ» հասկացությունը քաղաքական-փիլիսոփայական, քաղաքագիտական, սոցիալ-հոգեբանական, սոցիոլոգիական և լեզվաբանական հետազոտություններում կիրառվում է տարբեր իմաստներով: Այն մեկ կիրառվում է որպես քաղաքական հռետորաբանության տեսակ, մեկ՝ որպես քաղաքական տրամասության տեսակ, մեկ՝ որպես հասարակական խոսույթի տեսակ, մեկ՝ որպես «քաղաքական տրամաբանության» տեսակ, մեկ՝ որպես «նեղ գաղափարախոսություն»: «Պոպուլիզմ» բառի հիմքում ընկած է լատ. «popularis» արմատը, որը նշանակում է «ժողովրդական»: Ժամանակակից հայերեն բառարաններում պոպուլիզմը գերազանցապես թարգմանվում է որպես «ժողովրդահաճություն» կամ «ամբոխահաճություն»[5]:

Ժամանակակից քաղաքական-փիլիսոփայական հետազոտություններում առավել տարածված է պոպուլիզմի գաղափարախոսական սահմանումը: Հիմնվելով նիդերլանդացի հայտնի քաղաքագետ և քաղաքական փիլիսոփա Քաս Մուդի աշխատությունների և գաղափարների վրա՝ մենք նույնպես պոպուլիզմը սահմանում ենք որպես «նեղ» գաղափարախոսության տեսակ[6], ըստ որի՝ պոպուլիզմը, լինելով «նեղ»

---

[4] Տե՛ս **Castanho B. S., Vegetti F., Littvay L.**, The Elite Is Up to Something: Exploring the Relation Between Populism and Belief in Conspiracy Theories, Swiss Political Science Review 23(4), 2017, էջ 423–443:

[5] Տե՛ս **Ա. Հայրապետյան**, Օտար բառերի բառարան, Եր., 2011, էջ 445:

[6] Առավել մանրամասն տե՛ս **Բաբաջանյան Լ.**, Պոպուլիզմի և ցինիզմի՝ որպես «նեղ» գաղափարախոսությունների սահմանումների համեմատական վերլուծություն, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Եր., 2020, № 2 (32), էջ 31-44:

գաղափարախոսության տեսակ, ի տարբերություն «լայն» գաղափարախոսությունների (ազատականություն, համայնավարություն, ընկերվարություն, ազգայնականություն և այլն), չունի գաղափարախոսության «կարգաստեղծ» (normative) բաղադրիչ, այլ միայն ունի «նկարագրող» (descriptive) բաղադրիչ, քանի որ պոպուլիզմը այլ «նեղ» գաղափարախոսությունների (ցինիզմ, էլիտիզմ և այլն) նման միայն նկարագրում է տեղի ունեցող և տեղի ունեցած սոցիալ-քաղաքական, սոցիալ-տնտեսական և սոցիոմշակութային գործընթացները: Պետք է ավելացնել, որ գաղափարախոսական սահմանման դեպքում պոպուլիզմը չի դիտարկվում որպես ինքնաբավ գաղափարների համակարգ, այլ «մակաբույծ» մտակառույց է, որը կենսունակություն է ստանում միայն որոշակի «լայն» գաղափարախոսության համատեքստում: Այսինքն՝ պոպուլիստական մտակառույցը բովանդակություն է ստանում «լայն» գաղափարախոսության հաշվին և ըստ այդմ ունի քաղաքական-գաղափարախոսական ուղղվածություն: Ըստ քաղաքական-գաղափարախոսական ուղղվածության՝ պոպուլիզմը կարող է լինել աջական և ձախական, ընդ որում, ինչպես հայտնի է, քաղաքական գաղափարախոսությունների աջական և ձախական տարբերակումը նույնպես միանշանակ չէ. մի դեպքում աջերը պահպանողականներն են, ձախերը՝ առաջադիմականները, մեկ այլ դեպքում աջերը ազատականներն են, ձախերը՝ ընկերվարները, մեկ ուրիշ դեպքում աջերն ազգայնականներն են, ձախերը՝ աշխարհաքաղաքացիները[7]: Գոյություն ունեն պոպուլիզմի սահմանման և տարբերակման այլ մոտեցումներ ևս, բայց գրեթե բոլոր տեսաբանները պոպուլիզմի սահմանման գործում միակարծիք են պոպուլիզմը բնութագրող հետևյալ բաղադրիչների կամ տարրերի առկայության վերաբերյալ՝ բարոյական հակադրության հիմքի վրա հասարակության շերտավորում «չար» փոքրամասնության և «բարի» մեծամասնության, հակաէլիտիզմ (Ք. Մուդ), քաղաքականության մաքիավելիական պատկերում (Կ. Վեյլանդ), բազմակարծության մերժում (Յ.-Վ. Մյուլեր), «բարի» մեծամասնության շահագործում «չար» փոքրամասնության կողմից (Պ. Օստիգու), մեծամասնության «կամքի» բարոյական գերակայություն: Ամերիկացի քաղաքագետ Դ. Վուդսը, ամբողջացնելով մասնագիտական գրականությունում առկա պոպուլիզմի սահմանումները, առանձնացնում է պոպուլիստական գրեթե բոլոր պատումներում առկա հետևյալ չորս հիմնական բաղադրատարրերը.

ա. հասարակական երկու խմբի առկայություն՝ «ժողովուրդ» և «էլիտա»,

բ. վերջիններիս հակադրություն (անտագոնիզմ),

գ. «ժողովրդի» ինքնիշխանության հռչակում,

դ. «ժողովրդի» բարոյականության փառաբանում[8]:

---

[7] Տե՛ս **Weyland K.**, A Political-Strategic Approach, The Oxford handbook of populism, Oxford University Press, Oxford, 2017, էջ 64-96:

[8] Տե՛ս **Woods, D.**, The many faces of populism: diverse but not disparate, Woods and B.

Պոպուլիստական բոլոր տեսություններին փաստորեն բնորոշ է քաղաքականության մաքիավելիական ընկալումը, ըստ որի՝ քաղաքականությունը փոքրամասնությունների միջև պայքար է մեծամասնության նկատմամբ իշխանության հասնելու համար, քաղաքականությունը «չարի և բարու» հակադրություն է, քաղաքականության բեմահարթակում տեղի ունեցող գործընթացներն ընդամենը քողարկում են քաղաքականության ետնաբեմերում տեղի ունեցող իրական և որոշիչ գործընթացները:

Պոպուլիզմի այս մտակառույցը կարելի է «լցնել» ցանկացած քաղաքական գաղափարախոսությամբ, և այդ դեպքում քաղաքական տեքստի բովանդակությունը կփոխվի, բայց քաղաքական մտակառույցը կմնա նույնը՝ «չար և կազմակերպված փոքրամասնության» ու «բարի և անկազմակերպ մեծամասնության» հակադրություն:

Օրինակ՝ մարքսիստական-սոցիալիստական պոպուլիզմի դեպքում կազմակերպված «չար» փոքրամասնությունը կապիտալիստներն են, անկազմակերպ «բարի» մեծամասնությունը՝ բանվոր դասակարգը: Մարքսիստական քննադատական տեսությունը կապիտալիզմը դիտարկում է որպես մի հասարակարգ, որն ուղղված է ընդդեմ խեղճ և անօգնական մեծամասնության (բանվոր դասակարգ) և հօգուտ զորեղ փոքրամասնության (կապիտալիստների դասակարգ)[9]: Ըստ գերմանացի քաղաքական տեսաբան Դ. Շտերնբերգերի մեկնաբանության՝ մարքսիստական տեսությունը քաղաքականությունը ըմբռնում է որպես անդասակարգ հասարակության ստեղծման ռազմավարություն, որպես հասարակական անարդար հարաբերությունների մեծ փոխակերպում[10]: Այս «լայն» գաղափարախոսական օրակարգը, տեղավորվելով «նեղ» գաղափարախոսական պոպուլիզմի մտակառույցի մեջ, «աշխատեց». 20-րդ դարի սկզբին սոցիալիստական ուղղվածություն ունեցող բոլշևիկյան կուսակցությունը իշխանություն ստացավ նախկին Ռուսական կայսրության տարածքի մեծ մասի վրա: Պատմությունն այդ պոպուլիզմի հետևանքները տեսավ և առաջին հայացքից՝ պարադոքսալ կերպով, սակայն իրականում օրինաչափորեն տեսավ ոչ թե այն հասարակություններում, որտեղ «բանվոր դասակարգն» արդեն ձևավորված էր (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ֆրանսիա և այլն), այլ այն հասարակություններում, որտեղ «բանվոր դասակարգը» կազմում էր փոքրամասնություն (Ռուսական կայսրություն):

Ազգայնական պոպուլիզմի դեպքում՝ «բարի» մեծամասնությունը տվյալ ազգայնական շարժման ներկայացուցիչ ազգն է, «չար» փոքրա-

---

Wejnert (eds.) The many faces of populism: current perspectives, Bingley: Emerald, Research in Political Sociology 22, 2014, էջ 11:

[9] Տե՛ս **Bergmann E.**, Conspiracy & Populism, The Politics of Misinformation, Palgrave Macmillan, 2018, էջ 57:

[10] Տե՛ս **Б. Сутор, К. Хоман, Ф. Бломе-Дрез**, Политическая и экономическая этика, Фаир-Пресс, М., 2001, էջ 38:

մասնությունը՝ փոքրամասնություն կազմող որևէ ազգ, որը հովանավորվում է միջազգային գաղութարարների, իմպերիալիստների կողմից, և «օտարներին» ծառայող կառավարություն: Օրինակ՝ գերմանական նացիոնալ-սոցիալիստական պոպուլիզմի դեպքում «բարի» մեծամասնությունը արիական ռասսան էր, «չար» փոքրամասնությունը՝ հրեաները, միջազգային կազմակերպությունները՝ կոսմոպոլիտ ազատականները, կոմունիստները և այլն:

Սովորաբար պոպուլիստական «նեղ» գաղափարախոսությունը մասնագիտական գրականությունում միաձուլում են սոցիալիզմի և ազգայնականության, այսինքն՝ համայնավարական տեսությունների հետ: Սակայն քիչ չեն նաև պոպուլիստական «նեղ» գաղափարախոսությունները, որոնք միաձուլված են անհատապաշտական տեսությունների հետ, մասնավորապես՝ ազատականության և նորազատականության հետ: Օրինակ՝ ազատական և նորազատական պոպուլիստական գաղափարախոսություններն առավել տարածված էին 1990-ականներին, ազատական պոպուլիզմը՝ հետխորհրդային երկրներում, իսկ՝ նորազատական պոպուլիզմը՝ լատինաամերիկյան երկրներում[11]: Ազատական պոպուլիզմի դեպքում «չար» փոքրամասնությունը կոմունիստներն են, որոնց հակադրվում են «բարի» մեծամասնության ներկայացուցիչները՝ «ազատ անհատները», իսկ նորազատական պոպուլիզմի դեպքում «չար» փոքրամասնությունը պետական բյուրոկրատական ապարատն է, որը նույնպես հակադրվում է անհատին:

Ի՞նչ է դավադրապաշտական տեսությունը (ԴՏ)

ԴՏ-ի սահմանման համար նախ սահմանենք, թե ինչ է ընդհանրապես դավադրությունը: Հայերենի արդի բացատրական բառարաններում դավադրությունը սահմանվում է հետևյալ կերպ. «Մի քանի (կամ շատ) մարդկանց գաղտնի համաձայնություն՝ քաղաքական նպատակներով միատեղ գործողություններ կատարելու՝ մի մարդու կամ իշխանության դեմ»[12]: Եվ ուրեմն ԴՏ-ն տեսություն է «քաղաքական նպատակներով» իրականացված դավադրության մասին: Պետք է նկատել, որ ԴՏ-ն բազմաթիվ տեսաբանների կողմից ընկալվում է որպես առաջին հայացքից բացասական և իռացիոնալ երևույթ. մի դեպքում՝ որպես ճանաչողական շեղում, մեկ այլ դեպքում՝ որպես տրամաբանական մտածողության թերացման արդյունք, մեկ ուրիշ դեպքում՝ որպես հոգեբանական պաթոլոգիա (զառանցանք, պարանոյա) կամ՝ որպես նշված սահմանումների խառնուրդ[13]: Եվ տրամաբանական հարց է ծա-

---

[11] Տե՛ս **Weyland K.,** Neoliberal populism in Latin America and Eastern Europe, Comparative Politics, 31(4), 1999, էջ 379–401:

[12] https://bararanonline.com/%D5%A4%D5%A1%D5%BE%D5%A1%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6, 09.06.2021

[13] Տե՛ս **Ori F.,** The Philosophy of Taking Conspiracy Theories Seriously, Social Epistemology Review and Reply Collective 8 (9): 51-61, 2019, էջ 52-53:

գում. ինչո՞ւ է ԴՏ-ն ընկալվում որպես բացասական երևույթ, չէ՞ որ, ինչպես այլ գիտակարգերը, պատմագիտությունը և քաղաքագիտությունը ևս փորձում են վեր հանել ճշմարտությունը, այս դեպքում վեր են հանում իրականացված որևէ դավադրության մասին «իրական» պատմությունը: Բանն այն է, որ ԴՏ-ն նույնական չէ դավադրության մասին տեսությանը: ԴՏ-ն հիմնականում սահմանվում է որպես «կեղծ համոզմունքների ենթաբազմություն», ըստ որի՝ որոշակի իրադարձության բացարձակ պատճառը ներկայացվում է որպես մի խումբ մարդկանց կողմից նախապես մտածված ծրագիր, որն իրականանում է գաղտնիության պայմաններում և հետապնդում է անօրինական նպատակներ[14]: Այսինքն՝ լինելով «կեղծ համոզմունքների ենթաբազմություն»՝ ԴՏ-ն գիտական տեսություն չէ: Մինչդեռ դավադրության մասին տեսությունը գիտական տեսություն է, քանի որ բավարարում է գիտականության (տվյալ դեպքում՝ պատմագիտության և քաղաքագիտության) չափանիշներին՝ ստուգելիություն (վերիֆիկացիա), փաստերի վրա հիմնվածություն, ժխտելիություն (ֆալսիֆիկացիա) և այլն: Բայց ինչպե՞ս զանազանենք ԴՏ-ն դավադրության մասին տեսությունից: Օրինակ՝ բրիտանացի քաղաքական փիլիսոփա Ք. Քասսամն առաջարկում է ԴՏ-ի նույնականացման գործառութային սկզբունքը[15], ըստ որի՝ դավադրապաշտական է այն տեսությունը, որը ծառայում է քաղաքական քարոզչական նպատակների և բխում է գաղափարախոսական որոշակի օրակարգից[16]: Ք. Քասամը, ամբողջացնելով ԴՏ-ների վերաբերյալ տեսաբանների մոտեցումները, եզրակացնում է, որ ԴՏ-ները պարունակում են հետևյալ հինգ բաղադրատարրերը.

ա) մտահայեցողականություն (ԴՏ-ն հիմնվում է ենթադրությունների վրա),

բ) սիրողականություն (ԴՏ-ն ներկայացվում է սիրողական մակարդակում տվյալ երևույթի վերաբերյալ հիմնականում ոչ փորձագիտական շրջանակների կողմից),

գ) խորհրդավորություն (ԴՏ-ն ներկայացվում է խորհրդավորության շղարշով, այսինքն՝ գաղտնի և հասանելի է միայն որոշակի նեղ շրջանակների համար),

դ) հակադրվողականություն (ԴՏ-ն հակադրվում է երևույթի կամ իրադարձության վերաբերյալ պաշտոնական կամ ընդունված տեսակետին),

ե) մինչարդիականություն (ԴՏ-ն տեղի ունեցող և ունեցած իրա-

---

[14] Տե՛ս **Swami, V., Furnham A.,** Political paranoia and conspiracy theories, J.-P. Prooijen & P. A. M. van Lange (Eds.), Power politics, and paranoia: Why people are suspicious of their leaders, Cambridge: Cambridge University Press, 2014, էջ 218–236:

[15] Համաձայն այս սկզբունքի՝ առարկան սահմանվում է ըստ իր իրականացրած գործառույթի, օրինակ՝ սիրտը օրգան է, որը պատասխանատու է արյան արտամղման և շրջանառության համար:

[16] Տե՛ս **Cassam Q.,** Conspiracy theories, Polity Press, Cambridge, 2019, էջ 6:

դարձությունների մեջ տեսնում է միտումնավորություն)[17]:

Քասամը ներկայացնում է ԴՏ-ն բնորոշող այն բաղադրիչները, որոնք ավելի շատ վերաբերում են տեսության ձևավորմանն ու որոշակի կառուցվածքին, և նրա մոտեցումը իսկապես կարևոր է ԴՏ-ն դավադրության մասին տեսությունից տարբերելու համար: Ճիշտ է, դավադրության մասին տեսությունը գիտական տեսություն է, իսկ ԴՏ-ն՝ ոչ, սակայն քաղաքական տեսանկյունից ԴՏ-ի ոչ գիտական լինելն ամենևին չի նսեմացնում ԴՏ-ի գործառականությունը, քանի որ սոցիալական գիտական տեսությունները առաջին հերթին ուղղակիորեն առնչվում են բարոյագիտական տեսությունների հետ: ԴՏ-ի գիտական լինել-չլինելը սոցիալ-քաղաքական և սոցիոմշակութային գործընթացների վերլուծության համատեքստում այն պակաս կարևոր չի դարձնում: ԴՏ-ի հիմքում առկա են գաղափարական և իմաստային բաղադրիչներ, ուստի խնդիրը իմաստների և աշխարհայացքի և ոչ թե միայն մարդու ճանաչողական կամ իմացաբանական կարողությունների մեջ է: Հարկավոր է պարզել, թե գաղափարական և աշխարհայացքային ինչ բաղադրիչներ ունեն ԴՏ-ները, որ շատ հաճախ միաձուլվում են պոպուլիստական «նեղ» գաղափարախոսության հետ: Քննարկենք ԴՏ-ներին բնորոշ այն բաղադրատարրերը, որոնք համադրելի են պոպուլիստական տեսությունների հետ:

Քաղաքականության մաքիավելիական ըմբռնում

ԴՏ-ներին բնորոշ գաղափարական կամ աշխարհայացքային բաղադրատարրերից մասնագիտական գրականությունում առավել շատ քննարկվում է քաղաքականության մաքիավելիական ըմբռնման բաղադրատարրը: Բազմաթիվ տեսաբաններ նշում են, որ գրեթե բոլոր ԴՏ-ներում քաղաքականությունն ընկալվում է մաքիավելիական իմաստով, այսինքն՝ ա. քաղաքականությունը իշխանության համար մղվող պայքար է, բ. հասարակությունը բաժանվում է քաղաքականության համար պայքար մղող էլիտաների և քաղաքական գործընթացներից օտարված, քաղաքական որոշումների վրա ազդեցություն չունեցող մեծամասնության միջև: Քաղաքականության մաքիավելիական ըմբռնումը հակադրվում է արիստոտելյան ըմբռնմանը: Արիստոտելյան ըմբռնմամբ՝ քաղաքականությունը պետության կառավարմանն ուղղված գործունեությունն է, որտեղ իշխանությունն ընդամենը միջոց է հասարակական կյանքն ավելի լավը դարձնելու համար, մինչդեռ ըստ մաքիավելիական ըմբռնման՝ իշխանությունը նպատակ է, որի համար պայքար են մղում առանձին մարդիկ կամ մարդկանց խմբերը: ԴՏ-ներում մարդկանց մեծամասնությունը ներկայացվում է որպես «պասիվ» զանգված, որը մանիպուլացվում, շահագործվում է իշխանության հա-

[17] Տե՛ս նույն տեղը, էջ 3-20:

մար պայքար մղող փոքրամասնության կողմից։ Այստեղ ակնհայտ է քաղաքականության ըմբռնման դավադրապաշտական և պոպուլիստական տեսությունների ընդհանրությունը. երկու դեպքում էլ մարդկանց մեծամասնությունը օտարված է քաղաքական որոշումներ կայացնելուն մասնակցությունից, երկու դեպքում էլ փոքրամասնությունն «օգտագործում է» մեծամասնությանը, մի խոսքով՝ երկու դեպքում էլ քաղաքականությունն ընկալվում է մաքիավելիական իմաստով, ինչից բխում է ԴՏ-ների և պոպուլիստական տեսությունների՝ հասարակության բարոյական հիմքի վրա շերտավորման բաղադրատարրը։

«Մենք-Նրանք» հակադրություն

ԴՏ-ներին բնորոշ գաղափարական մեկ այլ բաղադրատարր է «-Մենք-Նրանք» բարոյական հակադրության հիմքով հասարակության շերտավորումը[18]։ Չծավալվելով «Մենք-Նրանք» հակադրության սեմիոտիկական առանձնահատկությունների մեջ՝ անդրադառնանք խնդրի գաղափարական կողմին։ «Մենք-Նրանք» բարոյական հակադրությունը ԴՏ-ների մտակառույցում զբաղեցնում է առանցքային դեր, քանի որ դավադրության սահմանումն ինքնին ենթադրում է մարդկանց խումբ, որը պատրաստվում է վնասել կամ արդեն իսկ իր գործողություններով վնասել է ուրիշներին։ Այսինքն՝ այս մտակառույցը ենթադրում է, որ կան «Ուրիշներ» («Նրանք»), ովքեր պատրաստվում են վնասել «Մեզ» («Մենք»)։ Այս մտակառույցում առկա են «չարամիտ» «Ուրիշ»-ը և «անմեղ ու ազնիվ» «Մենք»-ը։ Չարամիտ «Ուրիշների» մտակառույցը, կախված քաղաքական-գաղափարախոսական համատեքստից, կարող է տարբեր լինել։ Սոցիալիստական-մարքսիստական գաղափարախոսական օրակարգի դեպքում չարամիտ «Ուրիշ»-ը «կապիտալիստներն» են, ազատական քաղաքական-գաղափարախոսական համատեքստի դեպքում՝ «ավտորիտար իշխանությունները», ազգայնականի դեպքում՝ «թշնամի» հռչակված ազգության ներկայացուցիչները, «աշխարհաքաղաքացիները» և այսպես շարունակ։ «Մենք-Նրանք» բարոյական հակադրության առկայությունը լավագույնս համատեղվում է Ք. Քասամի՝ ԴՏ-ի գործառութային սահմանման հետ, քանի որ այդ հակադրությունը ենթադրում է նաև որոշակի գործողությունների համակարգ, ինչը այս կամ այն կերպ սպասարկում է տվյալ քաղաքական գաղափարախոսության քարոզչությանը կամ օրակարգին։

Էլիտաների կամ իշխանությունների հրեշացում

ԴՏ-ներին բնորոշ «Մենք-Նրանք» հակադրության բաղադրատարրը պայմանավորում է նաև ԴՏ-ներին բնորոշ մեկ այլ բաղադրատարրի գոյությունը՝ էլիտաների կամ իշխանությունների հրեշացումը։ Ընդ ո-

[18] Տե՛ս **Leone M., Madisson M.-L., Ventsel A.**, Semiotic approaches to conspiracy theories, Routledge Handbook of Conspiracy Theories, Taylor & Francis group, New York, 2020, էջ 50:

րում, նկատենք, որ հակաէլիտիզմը բնորոշ է ոչ միայն ԴՏ-ներին, այլև, ինչպես քննարկվեց վերը, պոպուլիստական տեսություններին: «Էլիտա» եզրույթը հայերենում տարբեր կերպ է մեկնաբանվում: Խոսելով ԴՏ-ների և պոպուլիստական տեսությունների հակաէլիտիստական բնույթի մասին՝ տեսաբանները գերազանցապես նկատի ունեն «էլիտայի» որպես «վերնախավի» ըմբռնումը, այսինքն՝ «մարդկանց խումբ, որոնք ունեն «ազդեցություն», այլ կերպ՝ «ազդեցիկ խավ»»[19], «իշխող խավ»: Էլիտայի՝ «իշխող խավի» հրեշացումը մի կողմից բխում է ԴՏ-ի գործառութային սահմանման տրամաբանությունից. այն է՝ սպասարկելով քաղաքական որևէ կազմակերպության կամ գաղափարախոսության քարոզչական օրակարգը՝ ԴՏ-ում անհրաժեշտաբար պետք է լինի քաղաքական մեկ այլ խումբ կամ օրակարգ, որի դեմ է ուղղված քաղաքական տվյալ քարոզչությունը: Այստեղ կանխատեսելի հարց կարող է առաջանալ, թե արդյոք անհրաժեշտ է, որ քաղաքական այդ մեկ այլ խումբը կամ օրակարգը, որի դեմ ուղղված է ԴՏ-ն, լինի էլիտաների՝ քաղաքական ազդեցություն և իշխանություն ունեցող մարդկանց խումբ: ԴՏ-ի ներքին տրամաբանության անհակասականության սկզբունքը պահանջում է, որ լինի հենց էլիտա և ոչ մարդկանց այլ խումբ: Քանի որ միայն մեծ ազդեցություն ունեցող մարդկանց խումբն ունի այդքան կարողություն և հնարավորություն, որպեսզի կարողանա մարդկանցից թաքցնել «իրական» իրականությունը: Եվ ԴՏ-ի անհակասականության սկզբունքը պահանջում է, որ տվյալ ԴՏ-ի հետևորդները հավատան էլիտաների, իշխանությունների «չարամիտ» և «դավադիր» լինելուն: Պատահական չէ, որ ԴՏ-ի բազմաթիվ տեսաբաններ իրավացիորեն նկատում են, որ «դավադրապաշտական ցանկացած տեսությանը հավատալը նույնն է, թե հավատալ, որ իշխանությունները կարող են լինել չարամիտ և կարող են քողարկել իրենց չարագործությունները, որ գլխավոր իրադարձությունների պաշտոնական մեկնաբանությունները կարող են կեղծ լինել»[20]: Փաստորեն, հակաէլիտիզմը ԴՏ-ի անհրաժեշտ բաղադրատարրերից մեկն է:

Սոցիալ-քաղաքական գործընթացների «առասպելականացում»

Սոցիալ-քաղաքական գործընթացների առասպելականացումը բնորոշ է գրեթե բոլոր ԴՏ-ներին: Ըստ հայտնի մշակութաբաններ Յ. Լոտմանի և Բ. Ուսպենսկու՝ իրականության առասպելականացումը (այսինքն՝ իրականության առասպելական և սրբազան տեքստերով իմաստավորումը) բնորոշ էր գերազանցապես նախնադարյան հասարակություններին, սակայն ժամանակակից հասարակություններում

[19] http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=24&dt=HY_HY&query=%D5%BE%D5%A5%D6%80%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%BE 13.06.2021

[20] **Sutton, R. M. and K. M. Douglas,** Examining the Monological Nature of Conspiracy Theories, Van Prooijen, J.-W. and P. A. M. Van Lange (eds.), Power, Politics, and Paranoia. Why People Are Suspicious of Their Leaders. Cambridge: Cambridge University Press, 2014, p. 256.

պահպանվել են, այսպես կոչված, «տրանսմշակութային մետատեքստեր», որոնք շարունակում են մարդկանց համար ծառայել որպես աշխարհը հասկանալու և իմաստավորելու գործիքներ[21]: Սոցիալ-քաղաքական գործընթացների առասպելականացումը ԴՏ-ներում արտահայտված չէ այնքան պարզ և ուղղակի կերպով, որքան որ այն եղել է նախնադարյան հասարակություններում, սակայն կատարում է իմաստակերտման յուրահատուկ գործառույթ, ըստ որի՝ սոցիալ-քաղաքական դժբախտ երևույթներն ու իրադարձությունները տեղի չեն ունենում դժբախտության կամ հանգամանքների պատահական համընկնման հետևանքով, այլ պատճառավորված են միևնույն պատճառով՝ Չարիքով[22]: «Չարի և բարու» առասպելական պայքարը իսկապես տեղ ունի քաղաքական ուղղվածության ԴՏ-ներում: Յուրաքանչյուր ԴՏ, լինի աջական կամ ձախական քաղաքական ուղղվածության, սոցիալ-քաղաքական և սոցիոմշակութային գործընթացների մեջ նկատում է որոշակի միտումնավորություն: Ք. Քասամի՝ ԴՏ-ն բնութագրող հինգերրորդ բաղադրիչը՝ մինչարդիականությունը, ըստ էության վերաբերում է սոցիալ-քաղաքական գործընթացների առասպելականացումից բխող երևույթների և իրադարձությունների մեջ «չար» միտումնավորություն տեսնելուն: Ըստ ԴՏ-ների՝ չի կարող տվյալ ԴՏ-ին վերաբերող որևէ դժբախտ իրադարձություն տեղի ունենալ պատահականորեն. դա տեղի է ունենում կոնկրետ մարդկանց կողմից իրականացված չարամիտ ծրագրի հետևանքով: Այս իմաստով ԴՏ-ի գաղափարաբանությունը կարծես հուշում է, որ պետք է պայքար մղել «Չարի դեմ Բարու հաղթանակի» համար, այլ կերպ ասած՝ «կառուցել դրախտ երկրի վրա»: Պատահական չէ, որ ԴՏ-ների ուսումնասիրությունը գիտական հանրությունում առաջինը հանրայնացնողներից մեկը՝ ավստրիացի փիլիսոփա Կարլ Պոպպերը, իր հայտնի «Բաց հասարակությունը և նրա թշնամիները» աշխատությունում նկատել է, որ այն մարդիկ, ովքեր հավատում են, թե «ինչպես է պետք դրախտ կառուցել երկրի վրա», նաև առավել հակված են հավատալու ԴՏ-ներին[23]:

Փաստորեն դավադրության մասին տեսությունը գիտական տեսություն է, ԴՏ-ն՝ սոցիալ-քաղաքական երևույթներն ու իրադարձությունները մեկնաբանող քաղաքական տեսություն: Պոպուլիստական տեսությունները կամ պատումները նույնպես քաղաքական տեսություններ են և, ըստ այդմ, ԴՏ-ները և պոպուլիստական տեսությունները համեմատելի երևույթներ են: Սակայն ԴՏ-ների և պոպուլիստական տեսությունների ծավալները միշտ չէ, որ համընկնում են: Երբեմն ԴՏ-

[21] Տե՛ս **Lotman, J, and Uspenskij, B.**, On the semiotic mechanism of culture, New Literary History, 9 (2), 1978, էջ 211–232:

[22] Տե՛ս **Leone M., Madisson M.-L., Ventsel A,** նշվ. աշխ., էջ 47:

[23] Տե՛ս **Popper K. R.**, The Open Society and its Enemies. Princeton, NJ: Princeton University Press, 2013, էջ 307:

ները կարող են լինել պոպուլիստական, մասնավորապես այն դեպքերում, երբ ունեն պոպուլիստական տեսությունների բովանդակային ծանրաբեռնվածությունը կամ մտակառույցները, երբեմն կարող են և չլինել:

Ի՞նչ բաղադրատարրեր ունի պոպուլիստական ԴՏ-ն

Եվ այսպես՝ պոպուլիստական «նեղ» գաղափարախոսության և ԴՏ-ների իմաստային, աշխարհայացքային ընդհանուր բաղադրատարրերի համադրական վերլուծության շնորհիվ կարող ենք բացահայտել իմաստային, աշխարհայացքային այն մտակառույցները, որոնք բնորոշ են պոպուլիստական ԴՏ-ներին: Այստեղ կարելի է համաձայնել իսլանդացի քաղաքական տեսաբան Է. Բերգմանի այն մտքին, որ ԴՏ-ները պոպուլիստական խոսույթի ոչ անհրաժեշտ բաղադրատարրեր են, որոնք ցինիկաբար արտաբերում են քաղաքական շարժումների առաջնորդները, բայց այդ ԴՏ-ներին գերազանցապես հավատում են տվյալ շարժման հետևորդները, սակայն ոչ առաջնորդները[24]: ԴՏ-ները ավելի ու ավելի հաճախ են օգտագործվում «հմուտ» քաղաքական ձեռներեցների կողմից, որոնց գործունեությունն ու քաղաքական գիծը միշտ չէ, որ նույնացվում են պոպուլիզմի հետ: Բայց պոպուլիզմի մեջ մեղադրվող գրեթե բոլոր քաղաքական գործիչների հրապարակային ելույթներում կարող ենք հանդիպել որևէ ԴՏ-ի: Պոպուլիստական ԴՏ-ներին բնորոշ են այն բոլոր բաղադրատարրերը, որոնք ընդհանուր են առանձին վերցրած պոպուլիզմի և ԴՏ-ների համար: Պոպուլիստական ԴՏ-ներին բնորոշ են հետևյալ բաղադրատարրերը՝ սոցիալական իրականության պարզունակեցումը, քաղաքական գործընթացների առասպելականացումը («չարի և բարու» հակադրություն, «փրկչի» գալուստ և այլն), կազմակերպված ակտիվ փոքրամասնության՝ էլիտաների և «մանիպուլացվող» մեծամասնության՝ ժողովրդի, ազգի հակադրումը, էլիտաների հրեշացումը, մեծամասնության մաքրագործումը, քաղաքականության մաքիավելիական ըմբռնումը: Այս շարքին կարելի է ավելացնել մի շարք այլ բաղադրատարրեր, որոնք այլ հետազոտության առարկա կարող են դառնալ: Այլ հետազոտության առարկա է նաև պոպուլիստական ԴՏ-ների իմաստային, աշխարհայացքային բաղադրատարրերի վտանգավորության խնդիրը: Ինչո՞ւ են պոպուլիստական ԴՏ-ները վտանգավոր, իսկապե՞ս վտանգավոր են, թե՞ ոչ, արդյո՞ք պոպուլիստական ԴՏ-ները սպառնում են ժողովրդավարությանը, ինչպես պնդում են բազմաթիվ տեսաբաններ, ինչպե՞ս չեզոքացնել այդ վտանգները. սրանք հարցեր են, որոնցից ամեն մեկը առանձին հետազոտության թեմա է: Սակայն մի վտանգի մասին ամեն դեպքում պետք խոսել. պոպուլիստական ԴՏ-ները այսպես կոչված «հակաքաղաքականութ-

[24] Տե՛ս **Bergmann E., Butter M.,** Conspiracy theory and populism, Routledge Handbook of Conspiracy Theories, Taylor & Francis group, New York, 2020, էջ 340:

յան» բաղադրիչներ են: Ինչպես նշում է ամերիկացի քաղաքագետ Յ.-Վ. Մյուլերը. «Հակաքաղաքականությունը չի կարող իրական քաղաքական լուծումներ գեներացնել»[25]: Այսինքն՝ պոպուլիստական ԴՏ-ները խոչընդոտում են քաղաքական իրական խնդիրների ձևակերպմանն ու լուծմանն ուղղված հասարակական երկխոսություն ձևավորելը: Իսկ եթե հասարակական երկխոսության առանցքում գտնվում են մտացածին խնդիրները, տվյալ դեպքում՝ պոպուլիստական ԴՏ-ները, ապա լուծումներն ու ելքերը նույնպես լինում են մտացածին:

ЛЕВОН БАБАДЖАНЯН – ***Идеологические компоненты популизма и теории заговора.*** – В прошлом веке было много исследований по популизму и теориям заговора, и во всех имеется одна общая черта. Почти во всех исследованиях популизм и теории заговора рассматриваются как угроза демократии, установлению рационального, конструктивного социально-политического диалога. Однако идеологические и содержательные общности популизма и теорий заговора недостаточно изучены в профессиональной литературе. В настоящем исследовании обобщены общие идеологические компоненты популизма и теорий заговора, а также определены некоторые описательные элементы популистских теорий заговора. Этими компонентами являются макиавеллистское понимание политики, расслоение общества на основе морального противостояния («добрый народ» – «злая элита»), демонизация элит, мифологическое моделирование социально-политических процессов.

Ключевые слова: *“тонкая” идеология, популизм, теория заговора, конспирология, макиавеллизм, идеологический компонент, анти-элитизм*

LEVON BABAJANYAN – ***The Ideological Components of Populism and Conspiracy Theories.*** – There has been a lot of research on populism and conspiracy theories in the last century, and there is one thing in common in all researches. In almost all studies, populism and conspiracy theories are viewed as threatening democracy, the establishment of a rational, constructive social-political dialogue. However, the ideological and content generalities of populism and conspiracy theories have not been sufficiently studied in the professional literature. In this study, the general ideological components of populism and conspiracy theories have been summarized and some of the descriptive elements of populist conspiracy theories have been identified. These components are the machiavellian understanding of politics, the stratification of society on the basis of moral opposition ("good people" - "evil elite"), the demonization of elites, the mythological modeling of social-political processes.

Key words: *“thin” ideology, populism, theory about conspiracy, conspiracy theory, Machiavellianism, ideological component, anti-elitism*

[25] **Յ.-Վ. Մյուլեր**, Ի՞նչ է պոպուլիզմը, Newmag, Եր., 2019, էջ 85: